

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի, Հեղինե Բիշարյանի, Մհեր Շահգեղյանի և Մարգարիտ Եսայանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-172-07.12.2012-ՊԻ-010/0) վերաբերյալ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-182-Ն օրենքի ընդունումը պայմանավորված էր խորհրդարանական ընդդիմության դերի և նշանակության բարձրացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում օրենսդրական ակտերի քննարկում-2013-01-10, 33

ների ընթացքում բազմակարծության դրսևորման և հարցերի այլընտրանքային լուծումների վերհանման համար լիարժեք պայմանների ապահովման անհրաժեշտությամբ: Նշված օրենքի 1-ին հոդվածով առաջին անգամ սահմանվեցին «ընդդիմադիր խմբակցություն» հասկացությունը, ինչպես նաև ընդդիմադիր խմբակցության գործունեության երաշխիքները:

Օրենքի նախագիծը մշակելիս՝ հաշվի էին առնվել խորհրդարանական ընդդիմության իրավական կարգավիճակի վերաբերյալ միջազգային փորձը և գործող իրավական ակտերը՝ առաջին հերթին՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Ժողովրդավարական խորհրդարանում ընդդիմության իրավունքների և պարտականությունների ընթացակարգային ուղենիշները» N 1601 (2008) բանաձևը, մասնավորապես, դրանում ամրագրված հետևյալ սկզբունքային մոտեցումները՝

1) քաղաքականապես ներկայացուցչական խորհրդարանը մարմնավորում է հասարակությունը՝ արտացոլելով նրա կառուցվածքի բազմազանությունը, և աշխատում է՝ հարգելով բազմակարծությունը.

2) խորհրդարանի ժողովրդավարական ցուցանիշը որոշվում է ընդդիմության կամ խորհրդարանական փոքրամասնության՝ իր խնդիրների լուծման համար ունեցած միջոցների ծավալով.

3) ընդդիմությանը պետք է տալ այնպիսի կարգավիճակ, որպեսզի նա պատասխանատու և կառուցողական դեր ստանձնելու հնարավորություն ունենա:

Ըստ այդմ, համաձայն օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, ըստ հերթագրման հաջորդականության՝ մինչև 3 թույն տևողությամբ հայտարարություններով սկզբում կարող են հանդես գալ ընդդիմադիր խմբակցությունների 3-ական հերթագրված պատգամավորներ, որից հետո հայտարարություններով հանդես են գալիս հերթագրված մյուս պատգամավորները, և 105-րդ հոդվածի 7.1-ին մասի համաձայն՝ առաջինը տրվում են

ընդդիմադիր խմբակցությունների 3-ական հերթագրված պատգամավորների բանավոր հարցերը, որից հետո բանավոր հարցերով հանդես են գալիս հերթագրված մյուս պատգամավորները:

Մինչդեռ ներկայացված օրենքի նախագծի ընդունմամբ կսահմանավակվի ընդդիմադիր խմբակցությունների հերթագրված պատգամավորների ելույթների և հայտարարությունների հնարավորությունը՝ 3-ականը փոխարինելով 1-ականով, ինչն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համակարգային տրամաբանությանը հակառակ՝ նեղացնում է ընդդիմությունը ներկայացնող պատգամավորների գործունեության շրջանակը:

Օրենքի նախագծում մասամբ պահպանված չեն օրենսդրական տեխնիկայի կանոնները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ հերթագրված պատգամավորները որոշակիորեն կօգտվեն հարց տալու իրավունքից, իսկ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորները հնարավորություն կունենան մեկական հարց արտահերթ հնչեցնելու:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է ՀՀ ԱԺ նստաշրջանի ընթացքում ելույթ ունեցող ընդդիմադիր խմբակցությունների հերթագրված պարզամավորների թվաքանակի փոփոխությանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն**:

**ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի վերաբերյալ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում
կարգավորման**

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման
վերաբերյալ**

<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի ընդունվելու կամ չընդունվելու դեպքում Հայաստանի Հանրապետության
պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային
բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

Պ-172-07.12.2012-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ****«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետում «3-ական» բառերը փոխարինել «մեկական» բառերով:

Հոդված 2. Օրենքի 105-րդ հոդվածի 7.1 կետում «3-ական» բառերը փոխարինել «մեկական» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Նկատի ունենալով, որ հայտարարությունների եւ հարց ու պատասխանի տեսողությունը սահմանափակ է (յուրաքանչյուրը 90 րոպե), եւ հաշվի առնելով, որ ընդդիմությունը ներկայացնող խմբակցությունների թիվը երեքն է, այսինքն միանգամից կարող են 9 պատգամավոր օգտվել հարց տալու իրավունքից, իսկ մեկ հարց ու պատասխանի տեսողությունը կարող է լինել միջինը 10 րոպե, ուստի, այդ դեպքում հարց ու պատասխանի ժամանակը կստացվի 90 րոպե: Այսինքն մյուս պատգամավորները կզրկվեն նշված իրավունքից: Նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի հերթագրված պատգամավորներին որոշակիորեն օգտվել հարց տալու իրավունքից, իսկ ընդդիմությունը ներկայացնող խմբակցությունները հնարավորություն կունենան իրենց կողմից կարելի համարվող մեկական հարց արտահերթ հնչեցնելու: